

*Արտաքուլ.*  
ԴԵՊԻ ԱՆՋԱՅՏՈՒԹՅՈՒՆ

Анна Аствацатурян Теркотт

*Изгнание.*  
В НИКУДА

Աննա Աստվածատուրյան Թերթթ

# *Արտաքուլ.*

ԴԵՊԻ ԱՆՅԱՅՏՈՒԹՅՈՒՆ

Թարգմանությունը ռուսերենից՝  
Անուշ Մարտիրոսյանի



ԵՐԵՎԱՆ  
2022

ՀՏԴ 821.19-94 Աստվածատուրյան Թերքոթ  
ԳՄԴ 84(5Հ)  
Ա 764

Աստվածատուրյան Թերքոթ Աննա Արտաքսում. Դեպի  
Ա 764 անհայտություն / Ա. Աստվածատուրյան Թերքոթ;  
Թարգմանությունը ռուսերենից՝ Ա. Մարտիրոսյանի.- Եր.:  
Newmag, 2022.- 380 էջ:

Ինչպե՞ս 8 տարեկան աղջնակը դարձավ վայրագության ամենադաժան դրսևորումների ականատեսը: 1988 թվականին Բաքվում հայատյացության ահազնացող ալիքը սրբեց-տարավ համակեցության և մարդկային կարեկցանքի մասին բոլոր միջերը: Աննա Աստվածատուրյան Թերքոթն այս գրքում Բաքվի ջարդերի, բնաջնջման և ազգային հողի վրա բռնության մասին պատմում է առաջին դեմքից: 8-ամյա աղջնակի հիշողության մեջ դաջվում են բոլոր մանրամասները: Այս պատմությունը ներկայացնում է հայ ժողովրդի ողբերգական էջերից մեկը՝ մի ընտանիքի օրինակով: Խեղված ճակատագրերի, հայրենիքում օտար լինելու և օտարության մեջ տուն փնտրելու մասին պատմող այս գիրքը տարիներ առաջ դեռահասի օրագիր էր: Այն նախ գրվեց՝ ընտանիքում եղած լուռ ցավը հաղթահարելու համար, հետո դարձավ գիրք: Ադրբեջանական վայրագությունները՝ փախստական աղջնակի աչքերով:

ՀՏԴ 821.19-94 Աստվածատուրյան Թերքոթ  
ԳՄԴ 84(5Հ)

ISBN 978-9939-884-72-1

Աննա Աստվածատուրյան Թերքոթ «Արտաքսում. Դեպի անհայտություն» © 2022, «Նյու Մեգ» ՍՊԸ  
Изгнание. В Никуда © 2012 Анна Аствацатурян Теркотт

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են  
«Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Թարգմանությունն իրականացվել է հեղինակի հետ կնքված պայմանագրով:

## **ՆՎԻՐՎՈՒՄ Է**

Իմ հրաշալի զավակներին՝  
Արմենին ու Իվանջելինին:  
Թող ձեզ և ձեր երեխաներին  
միշտ լուսավորեն խաղաղությունն  
ու ազատությունը:

## **Ի ՊԱՏԻՎ**

Իմ տոկուն ու հիանալի  
ծնողների՝ Նորիկ և Իրինա  
Աստվածատուրովների:  
Դուք նվիրել եք ինձ ոչ միայն կյանք:

## **Ի ՀԻՇԱՏԱԿ**

Բոլոր հայերի, նրանց, ովքեր զոհվել են,  
և նրանց, ում կյանքն անդառնալիորեն փոխվել է  
հայ-ադրբեջանական հակամարտության  
և ադրբեջանական ագրեսիայի հետևանքով:

## Բովանդակություն

Նախաբան .....	9
Մաս 1 .....	13
Մաս 2 .....	71
Մաս 3 .....	163
Մաս 4 .....	237
Մաս 5 .....	309
Երախտագիտության խոսք .....	362

## Նախարան

Վաղուց է եղել՝ 1992-ի հունվարի 31-ին: Ես տասներեք տարեկան էի, ու իմ ամբողջ ընտանիքի՝ հորս, մորս, կրտսեր եղբորս ու սակավաթիվ ազգականներիս՝ հորեղբորս, երկու հորաքույրերիս ու նրանց երեխաների հետ օդանավով թռչում էինք Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Մենք այնտեղ էինք ուղևորվում մի քանի ժամապուկով ու հանդուգն, միգուցե անսահման հույսով, որ այդ երկիրը կընդունի, ապաստան կտա ու կպաշտպանի մեզ: Թռչելով Նյու Յորքի վրայով՝ բոլորն անհամբեր ու հուզված նայում էին օդանավի օվալաձև լուսամուտներից՝ ներքևում ինչ-որ տեղ փորձելով տեսնել Ազատության արձանը:

Արդեն երկրորդ օրն էր, որ աչք չէի փակել: Օդանավում, օդանավակայանում երկար սպասելուց հետո ոտքերս ուռել էին, բայց ավելի շատ ինձ տանջում էին մտքերը. ի՞նչ է մեզ սպասում այս երկրում, որը պատրաստվում ենք մեր երկրորդ տունն անվանել: Արյունս սառում էր անգամ այդ մտքից:

Ամերիկայում առաջին ամիսներն անցան իրարանցման մեջ: Ես վարժվում էի լեզվին, սովորոյթներին, կյանքի բազմերանգությանը և այն ամենի առատությանը, որի մասին ինչ-որ ժամանակ կարելի էր միայն երազել: Ամռան սկզբին ավարտեցի ութերորդ դասարանը, ամռան ամիսներն անցկացրի անգլերենի դասընթացներին մասնակցելով ու մնացի իմ մտքերի հետ մենակ՝ իմ սենյակում: Տասնչորս տարեկանում առաջին անգամ իմ սենյակն ունեցա:

Ինքս ինձ հարցնում էի. ի՞նչ ապագա է ինձ սպասում Ամերիկայում: Ի՞նչ եմ դառնալու: Եթե իրար հետևից նամակներ

չէի գրում այնտեղ մնացած հարազատ ու մտերիմ մարդկանց կամ չէի լսում տեղական ռադիոկայանները՝ անգլերենս լավացնելու համար, ապա մտածում էի իմ դեռ չծնված երեխաների մասին: Ես ուզում էի, որ իմ ապագա երեխաները ոչ միայն իմանային այն իրադարձությունների մասին, որոնք իրենց մորը բերեցին Ամերիկա, այլև զգային իմ և իմ ընտանիքի ապրումներն այն, թվում է թե, հեռավոր տարիներին: Դրա համար էլ սկսեցի ռուսերենից անգլերեն թարգմանել իմ օրագիրը՝ ժամանակագրության ձևով: «Չէ՞ որ,- մտածեցի ես,- իմ երեխաներն ամերիկացիներ են լինելու և չեն կարողանա հասկանալ իմ ռուսերեն տեքստը...»:

Այստեղից էլ սկսվեց իմ ուղին դեպի այս գիրքը, որն սկըզբում լույս տեսավ անգլերեն: Ազատ ժամանակ սկսեցի ձեռագիր օրագիրս փոխադրել առանձին, տողանի թղթերի վրա: Իմ դեռևս կոտրատած անգլերենով օրագիրս լրացնում էի ամենատարբեր մանրամասներով: Մի երկու տարում հիշողությունների ձեռագիր թղթերի տպավորիչ կույտ հավաքվեց. այն թաքցրի պահարանումս՝ համարելով, որ կատարել եմ իմ առաքելությունը՝ ժամանակագրական կարգով դասավորելով անցյալում մնացած իրադարձությունները: «Առայժմ դա է նրանց տեղը», - որոշեցի ես և կենտրոնացա ամերիկյան նոր իրականությանն ընտելանալու և ակադեմիական առաջադիմությանս վրա:

Մեծանալով և մայր դառնալով՝ հասկացա, որ իմ կատարած աշխատանքը երկու նպատակ է հետապնդել: Դա հայ ժողովրդի ողբերգական իրադարձությունների հերթագայության մասին դեռահասի հիշողությունների ժամանակագրությունն է՝ դիտարկված մեկ առանձին ընտանիքի՝ մեր



ընտանիքի տեսանկյունից: Միաժամանակ դա միջոց է հաղթահարելու ընտանիքում եղած ցավը, որտեղ ընդունված չէր մանրամասն խոսել այս թեմայով:

Հյուսիսային Դակոտայի համալսարան ընդունվելուց մի փոքր առաջ ձեռագիր տեքստը համակարգիչ մուտքագրեցի: Ձեռագիրը դպրոցի իմ անգլերենի ուսուցիչ Ջոն Ուոլի, այնուհետև անգլերեն և գեղարվեստական ստեղծագործության համալսարանական դասախոսների հետ քննարկելուց հետո առաջին անգամ մտածեցի տեքստը հրատարակելու մասին: Իրավաբանական ֆակուլտետում ուսանելու ժամանակ հաճախ էի այցելում Բոստոնի հայկական կազմակերպություններ, օրինակ՝ Հայ օգնության միություն կամ Armenian Weekly թերթ: Այնտեղ ծանոթացա հայ տաղանդավոր գրող ու բանաստեղծ Թաթուլ Սոնենց-Փափազյանի հետ, որն իմ ընկերը դարձավ: Նա ուշադիր ու հոգատարությամբ խմբագրեց գիրքը՝ դրանում խնամքով պահպանելով երեխայի ձայնը:

Սա իրական պատմություն է: Սակայն որոշ անուններ գրքում փոխված են՝ այդ մարդկանց անձնական կյանքի ու անվտանգության շահերից ելնելով:

*Աննա Ասրվաճապուրյան-Թերրոթ*

ԱՎԱ 1

---

1988 թ.



## Գլուխ 1

— Տատի՛կ, տատի՛կ:

Պատասխան չկա: Ինչո՞ւ չի պատասխանում: Ինչո՞ւ ինձ չի նկատում: Ախր միայն տատիկն է կարող հասկանալի բացատրել ինձ, թե ինչ է կատարվում: Մի անգամ էլ փորձեմ.

— Տատի՛կ, տատի՛կ...

*... 1988-ի Բաքվի սովորական քամոպ փեպրվարյան երեկո է: Ոչ լրիվ, ասես թերարժեք լուսինն ու աստղերը հազիվ են նշմարվում երկնքում խորացող ամպերի միջից: Երեկոյան ժամը 11-ն է: Ընթրիքը վաղուց ավարտվել է: Մեր ընտանիքը հավաքվել է հեռուստացույցի մոտ: Դիտում ենք Մոսկվայի լուրերը՝ պեպական հաղորդում, որը կենտրոնացված հեռարձակվում էր ամբողջ ԽՍՀՄ-ով: Ծնողներս չեն կարողանում պոկվել էկրանից: Ես չեմ հասկանում՝ ինչ է կատարվում: «Ինչի՞ց են այդպես վախեցած,– մտածում եմ ինքս ինձ: — Ինչո՞ւ են սկսել շշուկով խոսել»: Ասես մոռանալով իմ գոյության մասին՝ նրանք սոսնձվել էին էկրանին՝ լսելով հակասական ու շփոթեցնող լուրերը: Փորձում եմ գոնե մի բան հասկանալ՝ ապարդյուն: Ծնողներս կարծես դժգոհ են ու հուզվում են: Ինչոր բանի հետ նրանք համաձայն չեն, դրա համար էլ շփոթված են: Բայց, այդուհանդերձ, ուշադիր լսում են հաղորդավարների խոսքը: Ինչ էլ լինի, դա նրանց միակ պատուհանն է արտաքին աշխարհ:*

*Անհասկանալիության հանդեպ վախը սողոսկեց նաև իմ գիտակցության մեջ: Տեղի ունեցողի իմաստն անըմբռնելի*